

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐ Մ.Մ.ՄԻՆԱՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՆԱԽԱԲԱՆ

ԱրՊՀ-ն, աշխարհի բոլոր այլ համալսարանների նման, գտնվում է մեծ մարտահրավերների և փոփոխությունների ժամանակաշրջանում՝ պայմանավորված 21-րդ դարի համաշխարհայնացման, տեխնոլոգիական, սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական մարտահրավերներով և գլոբալ փոփոխություններով:

Գնահատելով գլոբալ մարտահրավերներն ու հնարավորությունները և, հաշվի առնելով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որդեգրել է կրթության բնագավառի զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման գերակայություն, ԱրՊՀ-ն իր ուսանողներին պետք է պատրաստի որպես պատասխանատու և բեղմնավոր գործունեությամբ քաղաքացիներ՝ ժողովրդավարական հասարակությունում կյանքի և աշխատանքի համար: Լինելով բարձրագույն կրթության առաջատարը երկրում՝ համալսարանը պետք է առաջարկի նորարարական ուսանողամետ ուսուցում, տրամադրի որակյալ կրթական ծրագրեր և խրախուսի կատարելության սկզբունքները ուսանողների և աշխատակիցների

մեջ:

Գիտակցելով իր դերակատարությունը գլոբալացման պայմաններում գիտելիքի վրա հիմնված հասարակություն ձևավորելու գործում՝ ԱրՊՀ-ն պետք է ձգտի դառնալ միջազգային չափանիշներին համապատասխան համազգային գիտակրթական կենտրոն, դրանով իսկ իր գոյատևման քաղաքականությունը փոխարինելով արագընթաց զարգացման քաղաքականությամբ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի պետական համալսարանը կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի գլխավոր առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումն ու տարածումն է: Կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, համալսարանը կշարունակի խթանել իր ուսանողների, դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը, կնպաստի հանրության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի բարեկեցության բարձրացմանը: Համալսարանական կրթության կառուցվածքն ու բովանդակությունը անընդհատ նորացման մեջ են՝ կապված գիտական նոր ուղղությունների զարգացման հետ և ուղղված են կրթության ու աշխատանքի շուկայի պահանջարկի բավարարմանը: Այդ նպատակով հարկ է պարբերաբար կատարել վերլուծական աշխատանք՝ ըստ մասնագիտությունների, ճշտել համալսարանական կրթության որակական աստիճաններին ներկայացվող պահանջները, բարձրացնել կրթության որակը, շրջանավարտների պատրաստության մակարդակը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կրթական գործունեության արդիականացումը.

Կրթական գործունեության արդիականացման նպատակն է դառնալ տարածաշրջանի առաջատար բուհերից մեկը, պահպանել կրթական բարձր չափանիշները և հնարավորություն տալ սովորողներին՝ լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր:

Ռազմավարական այս նպատակին հասնելը ենթադրում է մի շարք միջոցառումների իրականացում, մասնավորապես.

- Բակալավրի, մագիստրոսի, կրթական ծրագրերում իրականացնել մասնագիտությունների ճշգրտում, չկայացած և զարգացման հեռանկար չունեցող, ինչպես նաև համալսարանի իրական հնարավորություններից վեր մասնագիտությունների կրճատում:

- Կրթական ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի անցնելու կարողությունների բարձրացման երաշխիքի մշակման նպատակով իրականացնել հիմնական գործատու կազմակերպությունների պահանջարկի համալիր ուսումնասիրություն:

- Արդիականացնել և վերակառուցել բակալավրի կրթական ծրագրերի կրթության կառուցամասը՝ դրանք ուղղորդելով ուսանողների հաղորդակցման, քննադատական մտածողության, քանակական փաստարկման, միջանձնային և կառավարման կարողությունների զարգացմանն ու մասնագիտական էթիկայի ձևավորմանը:

Անհրաժեշտ է ապահովել դասախոսի սովորեցնող գործունեությունից անցումը ուսանողի, առավել ևս մագիստրոսի, ճանաչողական գործունեության:

- Ստեղծել ներքին չափանիշներ և ընթացակարգեր՝ ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային-ռեսուրսային ապահովվածության գնահատման, ուսումնական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման և պարբերական վերանայման համար:

- Մշակել չափանիշներ, կանոնակարգեր՝ ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար՝ ներառյալ վերանայման ու բողոքարկման մեխանիզմները՝ միաժամանակ ապահովելով դրանց հրապարակայնությունը:

- Մշակել չափանիշներ ու մեխանիզմներ դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման համար:

- Ընդլայնել կրեդիտային համակարգի կիրառության տիրույթը՝ ընդգրկելով հեռակա ուսուցումը և հետբուհական կրթությունը:

- Ներդնել դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման ու մշակման, ակադեմիական տեղեկագրի ու դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական էլեկտրոնային համակարգ:

- Հիմնել ներհամալսարանական դրամաշնորհային ծրագրեր՝ դասավանդման և ուսումնառության առաջավոր մեթոդների մշակման ու տարածման համար, սահմանել ամենամյա մրցանակներ դասավանդման նորարարական մեթոդները հաջողությամբ կիրառող դասախոսների խրախուսման համար:

- Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված ու

արդյունավետ օգտագործումը համալսարանի ուսումնական գործընթացում, յուրաքանչյուր ֆակուլտետին կից ստեղծել համակարգչային կենտրոն և ընթերցասրահ:

- Բարելավել ուսումնական ենթակառուցվածքները՝ դրանք դնելով որակյալ դասավանդման մեթոդական հենքի, տեխնոլոգիական ռեսուրսների վրա, զարգացնել տեխնոլոգիական կարողությամբ լսարանների ցանցը:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ռազմավարական այս նպատակի ձեռքբերումը ենթադրում է առավելագույնի հասցնել համալսարանի գիտական ներուժի օգտագործումը տնտեսության զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման գործում, խրախուսել դասախոսական կազմի ակտիվ ներգրավումը հետազոտական աշխատանքում:

Համալսարանի գիտական գործունեության հիմնախնդիրը պայմանավորված է հանրապետությունում գիտության ոլորտի արդի ճգնաժամով, որի լուծումն օրակարգի հրատապ խնդիրներից է: Համալսարանի հեռահար նպատակը, որպես գիտական առաջատար օղակի կայացումն է, կրթական և գիտական գործունեության հավասարակշռումը:

Գիտական և նորարարական գործունեության հետագա զարգացումը ենթադրում է.

- Համալսարանի դասախոսական կազմը առավելագույնս ներգրավել հետազոտական նախագծերում՝ դասախոսի աշխատավարձի չափը սահմանել ըստ նրա տված գիտական արդյունքի: Միաժամանակ բարձրացնել գիտական աստիճանների համար սահմանված հավելավճարները:

- Գիտական ծրագրերում ներգրավել նաև ասպիրանտներին և մագիստրանտներին, խրախուսել ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը, պրակտիկաների կիրառական-հետազոտական ուղղվածությունը:

- Մշակել և ներդնել ԱրՊՀ գիտահետազոտական գործունեության կանոնադրությունը, որոշ ամբիոններին կից ստեղծել ժամանակակից լաբորատորիաներ:

- Զարգացնել համալսարան-տնտեսություն հետազոտական համագործակցությունը, հետազոտությունների ապրանքայնացման նպատակով ձևավորել գիտության ինովացիոն ենթակառուցվածքը:

- Կազմակերպել գիտական աշխատանքների ամենամյա մրցույթ

- Խթանել համալսարանի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ՀՀ և արտերկրի գործընկերների հետ համատեղ իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ, սերտացնել կապերը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ:

- Աջակցել համալսարանի մասնագետների և ուսանողների ընդգրկմանը միջազգային գիտական նախագծերում, հանրապետությունում և նրա սահմաններից դուրս իրականացվող տարբեր ծրագրերի և դրամաշնորհների շրջանակներում ծավալվող աշխատանքներին:

- Վերահսկողություն սահմանել գիտական աշխատանքների երաշխավորության և տպագրության նկատմամբ:

Կադրային ներուժի զարգացումը

- Համալսարանը մշտապես պետք է նախանձախնդիր լինի բարձրորակ դասախոսական կազմի ներգրավման, նրանց շարունակական կատարելագործման հնարավորությունների և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայրի տրամադրման առումով: Այս բնագավառում նախատեսվող քայլերն են.
- Գնահատել կրթական գործընթացի կադրային ապահովվածությունն ըստ գիտակարգերի, կրթական մակարդակների ծրագրերի:
 - Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարժամկետ ծրագիր՝ վերակողմնորոշելով ասպիրանտական կրթությունը դեպի համապատասխան մասնագիտությունների կադրային ապահովում:
 - Գիտամանկավարժական կազմի երիտասարդացում, երիտասարդ կադրերի հետ կնքվող հատուկ պայմանագրային կարգի ներդրում:
 - Դասախոսների համար համապատասխան պայմանների և խթանող մեխանիզմների ստեղծում՝ կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին մասնակցելու համար:
 - Համապատասխան գիտական աստիճան չունեցող պրոֆեսորների և դոցենտների հարցի վերանայում, անհրաժեշտության դեպքում արտահերթ ընտրությունների կազմակերպում:
 - Բարձրացնել համալսարանի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը՝ ներդնելով սոցիալական մոնիտորինգի համակարգ:
 - Համակողմանիորեն զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի, հանգստի և մարզական բազաների պայմանները, ապահովել դրանց մատչելիությունը համալսարանի բոլոր աշխատակիցների համար:

Ենթակառուցվածքների

որակական

բարելավումը

Ռազմավարական այս նպատակը ենթադրում է բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ստեղծում: Մասնավորապես.

- Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազան՝ կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան:
- Ստեղծել լեզվի ուսուցման մասնագիտացված լսարան-լաբորատորիաներ՝ օտար լեզուների ուսուցման որակը արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:
- Զարգացնել և արդիականացնել համալսարանի համակարգչային ցանցը, ձևավորել միասնական տեղեկատվական համակարգ:
- Աշխատակիցների ուսուցման կազմակերպում՝ նրանց որակավորման և նոր սարքավորումների ու տեխնոլոգիաների հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով:
- Համալսարանի գիտական գրադարանի հագեցում սպասարկման ժամանակակից միջոցներով:

- Առավել մեծ պահանջարկ ունեցող գրականության թվայնացում և սպառողների համար դրանց օգտագործման մատչելիության բարձրացում: Ընթերցարանների աշխատանքային ժամերի ավելացում:

Սոցիալական

համագործակցության

զարգացումը

Համալսարանի սոցիալական համագործակցությունը ընկալվում է որպես Արցախում, Հայաստանում և արտասահմանում շահագրգիռ անձանց, կազմակերպությունների, համայնքների համաձայնեցված ու փոխշահավետ ներգրավում գիտակրթական և սոցիալ-մշակութային միջավայրի զարգացման խնդիրների քննարկմանն ու լուծմանը: Այն ենթադրում է հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին աջակցություն՝ նպաստելով համալսարանի ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը: Մասնավորապես.

- Կատարելագործել համալսարանի ինտերնետային կայքը, բարելավել նրա լրատվական ապահովումը, տեխնիկական վիճակը և շահագործման արդյունավետությունը, ակտիվացնել համագործակցությունը ՋԼՄ-ների հետ:
- Համակարգել և նպատակաուղղել համալսարանի գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները՝ ուղղված նրա հասարակական վարկանիշի բարձրացմանը:
- Իրականացնել համալսարանի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ նրա գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Համալսարանի գործունեության առանցքային դրույթը յուրաքանչյուր ուսանողի հանդեպ պատասխանատվությունն է: Այս առումով առաջնահերթությունը տրվում է ուսանողի կրթական ձեռքբերումներին, բավարարվածությանն և հաջողությանը՝ նրա կարիքները դնելով համալսարանի ակադեմիական և օժանդակ ծառայությունների գործունեության, կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի մշակման հիմքում: Համալսարանը կշարունակի աջակցել ուսանողների քննադատական մտածողության, հետազոտական և ստեղծագործ աշխատանքի ունակությունների զարգացմանը՝ նրանց մտավոր ու սոցիալական առաջընթացն ապահովելու համար: Կարևորում են

- Համալսարանի գործունեությանն ու կառավարմանը ուսանողների ներգրավման ընդլայնումը:
- Ուսանողների վարքագծային վարկանիշի ներմուծումը, ուսանողների իրավունքների և պարտականությունների իրացման, կարգապահության, դաստիարակության համալիր ծրագրերի կազմումը:
- Ուսանողական գիտական ընկերության գործունեության արդյունավետ պայմանների ստեղծումը, ուսանողական գիտական պարբերականի հիմնադրումը:
- Գիտական, գեղարվեստական, երաժշտական, թատերական, սպորտային խմբակների, ուրախների և հնարամիտների համալսարանական ակումբի հիմնումը:
- ԲՈՒՀ-ում ուսումնառության անտոկոս վարկավորման համակարգին ներդնումը:

Ֆինանսական կայունություն և արդյունավետ կառավարում

- Համալսարանը պետք է ավելի նախաձեռնող դառնա իր գործունեության ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման ու դրանց բազմազանեցման հարցում, բարձրացնի կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը: Այս առումով կարևորում են հետևյալ միջոցառումների իրականացումը.
- Մեծացնել համալսարանի պետական ֆինանսավորման ծավալը՝ պետական գիտակրթական ծրագրերին մասնակցության ընդլայնման միջոցով: Միաժամանակ ներկայացնել բյուջետային ֆինանսավորման հնարավորությունների ավելացման հիմնավորած պահանջներ: Հանդես գալ մեկ ուսանողի համար հատկացվող տարեկան բյուջետային միջոցների շեմի բարձրացման առաջարկությամբ.
 - Ընդլայնել համալսարանի մատուցած ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման և առևտրայնացման քաղաքականությունը՝ կրթական, գիտահետազոտական և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում:
 - Ներդնել ուսման վարձերի գեղջերի կիրառման ձևուն համակարգ:
 - Ակտիվացնել համալսարանի մասնակցությունը կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին:
 - Ընդլայնել բարեգործական ներդրումներն ու օգնությունները՝ գործընթացին ներգրավելով նաև համալսարանի շրջանավարտներին: Պարբերաբար լուսաբանելով բարեգործական ծրագրերն ու միջոցառումները՝ նվիրատուների հետ պահպանել ու զարգացնել երկարաժամկետ գործակցային հարաբերություններ:
 - Իրականացնել թափուր և անգործունակ հաստիքների ու ստորաբաժանումների կրճատում:
 - Ապահովել համալսարանի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու նպատակային բաշխումը, բարձրացնել ռեսուրսների կառավարման օպերատիվությունը:
 - Անհրաժեշտ է իրականացնել համալսարանի կառուցվածքի մանրակրկիտ վերանայում՝ ֆունկցիոնալ, ռեսուրսային և կադրային լրացմամբ, ձևավորել պլանավորման և ներքին աուդիտի համապատասխան մարմիններ: Միաժամանակ օպտիմացնել համալսարանի գիտամանկավարժական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական անձնակազմի հաստիքների քանակը:
 - Ներդնել համալսարանի գիտահետազոտական կառավարման ու ծրագրավորման նոր համակարգ, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների համակարգչային լրկալ ցանց:
 - Ապահովել կառավարման ապակենտրոնացման սկզբունքի հետագա զարգացումը, հստակեցնել լիազորությունների և պատասխանատվության բաշխումը կառավարման համալսարանական և ֆակուլտետային մակարդակների միջև:
 - Ջարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը: Աջակցել ուսանողների հանրապետական, միջբուհական և համահայկական կազմակերպությունների համագործակցությանը:
 - Նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, նպաստել համալսարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը:

- Կատարելագործել դասախոսների, վարչական և ուսումնասօժանդակ կազմի ընտրության և առաջխաղացման մեխանիզմները՝ ապահովելով դրանց անաչառությունն ու թափանցիկությունը:
- Հաստատել և հետևողականորեն պահպանել համալսարանի աշխատակիցների կարգապահական ներքին կանոնակարգը:
- Իրականացնել ֆակուլտետների խոշորացում:

Ռազմավարական գործակցություն և միջազգայնացում

Համալսարանի դինամիկ զարգացումը ենթադրում է նրա արտաքին կապերի համակողմանի զարգացում, աշխատաշուկայի հետ գործակցային կապերի ամրապնդում, ինչպես նաև գործունեություն միջազգայնացման խթանում: Այս առումով անհրաժեշտ է.

- Ստեղծել երկարաժամկետ գործակցային կապեր համալսարանի հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:
- Խթանել համալսարանի և նրա ֆակուլտետների զարգացման և գիտակրթական ծրագրերի իրագործմանը հիմնական գործատու և գործընկերային կազմակերպությունների մասնակցությունը՝ ընդգրկելով ուսման հետ համատեղված աշխատանքների, պրակտիկաների և վերապատրաստման ծրագրերը:
- Համալսարանի տարածքում պարբերաբար կազմակերպել աշխատանքի տոնավաճառներ և հանդիպումներ՝ հիմնական գործատու կազմակերպությունների և առնչվող հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ:
- Մշակել համալսարանի միջազգային համագործակցության գերական ուղղությունների կազմը, ընդլայնել միջազգային գործունեության դաշտը՝ համալսարանի բոլոր ֆակուլտետների միջազգային համագործակցության ծրագրերում ընդգրկելով:
- Խթանել համալսարանի ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին: Պարբերաբար հրավիրել օտարերկրյա հայտնի դասախոսների:
- Նպաստել համալսարանի ուսումնագիտական միավորների, հետազոտական խմբերի և անհատ փորձագետների ակտիվ ներգրավմանը միջազգային գիտակրթական նախագծերում և դրամաշնորհային ծրագրերում:
- Ընդլայնել համագործակցությունը ՀՀ և ԱՊՀ կրթական քաղաքականություն մշակող կառույցների հետ և կուտակված փորձը կիրառել համալսարանում: